



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ապրիլի 2017թ. թիվ 43

**ԼՈՒՈՒՄԱՐԶՈՒՄ «ՄԱԲՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.04.2017թ. թիվ 01/18.2/2455-17 հանձնարարականի՝

Կ ա Ր Գ ա Դ ի Ր ու մ եմ.

1. Լոռու մարզում «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) Համայնքների ղեկավարների հետ որոշակիացնել այն միակ աղբավայրը, որն այսուհետ պետք է սպասարկվի:

2) Ներկայացնել ծրագրի արձանագրված աղբավայրերը փակելու կամ մաքրելու վերաբերյալ:

3) Կատարված աշխատանքների մասին հինգօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն «Մաքուր Հայաստան» միջգերատեսչական հանձնաժողովին:

3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Ապահովել համայնքների ավագանիների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց համար աղբահանության դրույքաչափերի սահմանումը, որոնց մեջ կներառվի աղբավայրի շահագործման ծախսերը:

2) Պարբերաբար յուրաքանչյուր փակված կամ տեղափոխված աղբավայրի մասին ներկայացնել տեղեկատվություն Google Earth-ի հենքի վրա ստեղծված հարթակում տեղադրելու համար:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. ապրիլի 27
ք.Վանաձոր